

Յովհաննու 20:21 (John 20:21)

«Ղրկուած էմք»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 03.31.02

Յովհաննու 20:21ին մէջ Յիսուս կըսէ իր աշակերտներուն, «*Ինչպէս Հայրը զիս ղրկեց, ես ալ ձեզ կը ղրկեմ:*»

Աստուած մեր Հայրը աշխարհ ղրկեց Յիսուս մեր փրկութեան համար: Յիսուսի յարութիւնը օրհնութիւն է մեզի, քանի որ կը փաստէ մեր փրկութիւնը, նաեւ հիմն է մեր յարաբերութեան Աստուծոյ հետ: Առաւել բարի լուրն է որ մենք կրնանք տարածել:

Ամառ մը New Orleans քաղաքին կեդրոնը հսկայ աւազանի մը շուրջ հաւաքուած մը կազմակերպեցին. 200 հիւր եւ 100 lifeguard (մարզիկ լողորդ, կեանք ազատելու). երբ այս հանելի առիթը վերջացաւ, տեսան որ մարդ մը խեղդուած էր, 100 lifeguardի ներկայութեան:

Մեր եկեցիին մէջ, կամ մեր շրջանակին մէջ արդիօք կա՞նք անձեր որ մինակ են, կամ կը կորսուին եւ մենք կը մնանք անտարբեր, տարուած մեր անձնական հոգերով, նոյնիսկ երբ կը տօնենք զատիկը:

Jackie Robinson առաջին հոչակաւոր սեւամորթ major league baseball խաղողն էր: Թէ խաղին ներկաները եւ թէ հսկիչները չէին ընդունիր զինք, իր մորթին գոյնին համար. բոլորը նախապաշարուած էին իրեն հանդէպ:

Օր մը երբ իր քաղաքին մէջ կը խաղար - Brooklyn - սիւսալ մը ըրաւ եւ ժողովուրդը բարձր ձայնով զինք նախատեց: Սակայն Reeseը իր ներմակ ընկերը եկաւ եւ թելը իր ուսին դրաւ, բոլոր ժողովուրդը լոնց: Jackie Robinson կը'սէր «*Այդ սիրոյ թելը զիս փրկեց:*»

Եսայեայ 52:7ը կըսէ, «*Ինչ գեղեցիկ են լեռներուն վրայ անոր ոտները՝ որ աւետիս կը բերէ, խաղաղութիւն կը փարոզէ, բարութեան աւետիսը կը բերէ, փրկութիւն կը փարոզէ:*»

Այս խօսքը կը նմանի ամուռ թելին՝ անձի մը ուսին վրայ: Քաշալերական բառ մը, նամակ մը, հեռաձայն մը, բարեւ մը եկեղեցիին մէջ: Այսինքն Աստուծոյ բարի լուրը տալ, փրկութեան աւետիսը տարածել: Գեղեցիկ են անոր ոտքերը որ կը հասնի անոնց որ պէտք ունին Աստուծոյ պարգեւին՝ յոյս եւ կեանք:

Mercedes-Benz - ինքնաշարժի ընկերութիւնը հեռատեսիլի վրայ կը ցուցունէին թէ որքան դիմացկուն է իրենց ինքնաշարժն որ կրնայ դիմանալ երբ զարնուէր զօրաւոր պատի: Իրենց հարցուցին թէ ինչու թոյլ կուտան որ ուրիշ ինքնաշարժի ընկերութիւններ ընդօրինակեն այս նոր գիտը: Պատասխանը սա էր «*Մենք կուզենք որ ուրիշներ ալ օգտուին:*»

Նոյնպէս Աստուծոյ բարի լուրը, այսինքն Աստուծոյ փրկութիւնը, մեզ կազատէ մեղքէ, որը շատ աւելի կարեւոր է քան թէ ինքնաշարժի մը պատին զարնուիլը եւ դիմանալը:

Յովհաննէս առաքեալ կ'ըսէ (Ա. Յովհաննու 5:12) «*Ան որ Որդին ընդունած է՝ կեանք ունի - յաւիտեանական կեանք. եւ ան որ Աստուծոյ Որդին ընդունած չէ՝ կեանք չունի:*» Ուրեմն դժողք կը դիմէ:

Այս յարութեան օրը, թող Աստուած խօսի մեր սրտին որ արթննանք եւ տարածենք բարի լուրը: Արթուն եւ զգաստ ըլլանք եւ երկարենք մեր ձեռքը եւ օգնենք անոնց որ պէտք ունին մեզի: Մեր անձը նուիրենք Աստուծոյ եւ ըլլանք Իր քաջ վկաները: